

25

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2019

Luys



Lnyu®



ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԱՐԴՅՈՐՔ
ԸՆՏՐԿԵԼ Է ՃԻՇՏ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԱՐԴՅՈ՞Ք ԸՆՏՐՎԵԼ Է ՃԻՇՏ ՃԱՆԱԴԱՐՀԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ.....	1
1.1. Օրենսդրական կարգավորումները.....	1
1.2. Կադաստրային արժեքի հաշվարկը.....	2
1.3. Փաստացի հարկման բազան և հարկերի ծավալը.....	3
2. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....	5
2.1. Զրոյական փուլ.....	6
2.2. Հիմնական փուլ.....	7
3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ.....	7
3.1. Ֆրանսիա.....	7
3.2. Ռուսաստան.....	8
3.3. Գերմանիա.....	9
3.4. Իսպանիա.....	10
3.5. Ռումինիա.....	10
3.6. Վրաստան.....	11
4. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓԱԹԵԹԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	13
5. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ՝ ԱՌԱՋ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ.....	15
6. ԱՄՓՈՓՈՒՄ.....	17

1. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Օրենսդրական կարգավորումները

Ներկայումս ՀՀ օրենսդրությամբ սահմանված է անշարժ գույքի հարկի երկու տեսակ՝ հողի հարկ և գույքահարկ: Հողի հարկի հետ կապված հարաբերությունները սահմանվում են «Հողի հարկի մասին» օրենքով, որն ընդունվել է դեռևս 1994թ. փետրվարի 14-ին: Ըստ այդ օրենքի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը, իսկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը¹:

Գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրա՝ կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15 տոկոսի չափով:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկը սահմանվում է հետևյալ չափերով՝ արդյունաբերական նշանակության հողերի համար կադաստրային արժեքի 1.0%, եթե այն գտնվում է բնակավայրերի ներսում և 0.5%, եթե այն գտնվում է բնակավայրերից դուրս:

Շենքերը և շինությունները հարկվում են գույքահարկով: Շինությունների հարկման բազա է համարվում օրենքով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը: Գույքահարկի հետ կապված հարաբերությունները սահմանվում են «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով, որտեղ անշարժ շենքերը և շինությունները բաժանվում են հետևյալ խմբերի՝

- անհատական բնակելի տուն,
- բնակարան,
- այգետնակ,
- ավտոտնակ (գույքահարկի դրույքաչափը՝ 0.2%),
- հասարակական նշանակության շինություն (գույքահարկի դրույքաչափը՝ 0.3%),
- արտադրական նշանակության շինություն (գույքահարկի դրույքաչափը՝ 0.3%),

¹ ՀՕ-101, ՀՀԳԽՏ 1994/8, հոդված 2:

- անավարտ (կիսակառույց) շինություններ:

Անհատական բնակելի տների, բնակարանների, այգետնակների և անավարտ (կիսակառույց) շինությունների գույքահարկի դրույքաչափերը ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Բնակելի շինությունների և անավարտ կառույցների գույքահարկի դրույքաչափերը

Հարկման բազան	Հարկի դրույքաչափը
Մինչև 3 մլն դրամը ներառյալ	Հարկման բազայի 0 տոկոսը
3 մլն դրամից մինչև 10 մլն դրամը ներառյալ	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3 մլն դրամը գերազանցող գումարի 0.1 տոկոսը
10 մլն դրամից մինչև 20 մլն դրամը ներառյալ	7,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 10 մլն դրամը գերազանցող մասի 0.2 տոկոսը
20 մլն դրամից մինչև 30 մլն դրամը ներառյալ	27,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20 մլն դրամը գերազանցող մասի 0.4 տոկոսը
30 մլն դրամից մինչև 40 մլն դրամը ներառյալ	67,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30 մլն դրամը գերազանցող մասի 0.6 տոկոսը
40 մլն դրամից ավելի	127,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40 մլն դրամը գերազանցող մասի 1.0 տոկոսը

1.2. Կադաստրային արժեքի հաշվարկը

Ինչպես արդեն նշվեց, շենքերի, շինությունների և հողի հարկման բազա է համարվում օրենքով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը: Կադաստրային արժեքի հաշվարկման կարգը տարբեր է բնակարանների, բնակելի տների, հասարակական և արտադրական նշանակության շինությունների և հողի համար: Սակայն, հաշվարկման մոտեցումը բավական նման է: Նախ սահմանվում է մեկ միավորի կադաստրային արժեքը, օրինակ՝ բնակարանների համար մեկ քառակուսի մետրի արժեքը սահմանվում է 230,000 դրամ՝ երկաթբետոնյա շինությունների համար և 255,000 դրամ՝ քարե շինությունների համար: Այնուհետև այս արժեքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով գույքի գտնվելու վայրը, շինության ծածկի տեսակը, բնակարանի հարկը, շինության վնասվածության աստիճանը, շինության մաշվածությունը, շինության ավարտվածության աստիճանը և այլ բնութագրիչներ:

Կադաստրային արժեքի գնահատման մեթոդի արդյունավետության ստուգման լավագույն տարբերակը ստացված գնահատականը շուկայական արժեքի հետ համեմատելն է: Մինչդեռ վերը նկարագրված բարդ կարգը որևէ


առնչություն չունի տվյալ գույքի շուկայական արժեքի հետ: ՀՀ օրենքով սահմանված մեթոդաբանությամբ հաշվարկված կադաստրային արժեքները բավական ցածր են ստացվում շուկայական արժեքներից, ինչն էլ առաջացնում է համայնքային բյուջեների եկամուտների կորուստ: Կադաստրային արժեքի հաշվարկման ներկա համակարգը հնարավորություն չի տալիս ստանալ անշարժ գույքի՝ շուկայական արժեքին մոտ գնահատական: Այդ պատճառով, գույքահարկի միջոցով հնարավոր չի լինում արդարացիորեն հարկել գույքը, և չի պահպանվում հարկման հորիզոնական և ուղղահայաց արդարության սկզբունքը: Ստացվում է, որ բավական բարձր շուկայական արժեք ունեցող գույքը ունենում է ցածր կադաստրային արժեք, և կադաստրային արժեքի հիման վրա հաշվարկվող հարկը այդ գույքի շուկայական արժեքի նկատմամբ դառնում է աննշան:

1.3. Փաստացի հարկման բազան և հարկերի ծավալը

ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների կազմում գույքահարկից ստացված մուտքերը զգալի մասնաբաժին են կազմում: Այսպես՝ 2018թ. համայնքների ընդհանուր հարկային եկամուտները կազմել են 26.3 մլրդ դրամ, որից 18.1 մլրդ դրամը կամ 68.8 տոկոսը կազմել են գույքահարկի գծով եկամուտները: Ընդ որում, փոխադրամիջոցների գծով գույքահարկը կազմել է 12.4 մլրդ դրամ, իսկ անշարժ գույքի գծով գույքահարկը՝ 5.7 մլրդ դրամ:

Գույքահարկի գծով եկամուտների կշիռը վերջին տարիներին ունեցել է աճի միտում՝ միջին հաշվով տարեկան շուրջ 1.2 տոկոսային կետով: Գույքահարկի զգալի մասը ձևավորվում է փոխադրամիջոցների համար վճարվող գույքահարկից, որն էլ մեծամասամբ ապահովում է ընդհանուր գույքահարկից ստացվող եկամուտների աճը: Անշարժ գույքից ստացվող գույքահարկը 2010-2018թթ. միջին հաշվով կազմել է համայնքների ընդհանուր հարկային եկամուտների մոտ 23.9 տոկոսը: Վերջին տարիներին այս կշիռն ունեցել է նվազման միտում և 2018թ. կազմել է 21.7 տոկոս՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.5 տոկոսային կետով (տե՛ս Գծապատկեր 1):


Գծապատկեր 1. Գույքահարկի և հողի հարկի կշիռները համայնքների հարկային եկամուտներում, %



Հողի հարկի գծով եկամուտները կազմում են միջին հաշվով տարեկան շուրջ 4.1 մլրդ. դրամ կամ ընդհանուր հարկային եկամուտների 18.6 տոկոսը:


2010-2018թթ. անշարժ գույքի գույքահարկի, ինչպես նաև հողի հարկի գծով եկամուտները գրեթե չեն ավելացել (տե՛ս Գծապատկեր 2): Հողի հարկի դեպքում եկամուտների աճի բացակայությունը հասկանալի է, քանի որ հարկման բազան չի ավելացել, մինչդեռ անշարժ գույքի գույքահարկի հարկման բազան աճել է՝ կապված շինարարության հետ, որը պետք է նպաստեր նաև հարկային եկամուտների աճին: Արդյունքում գույքահարկի և հողի հարկի գծով եկամուտների կշիռը ՀՆԱ-ի մեջ նույնպես ունի նվազող տրենդ:

Գծապատկեր 2. Գույքահարկի և հողի հարկի շարժընթացը 2010-2018թթ.



Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գույքահարկի գծով եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությամբ Հայաստանը բավական հետ է մնում ինչպես համադրելի երկրների ցուցանիշներից, այնպես էլ մի շարք զարգացած երկրներից: Այսպես՝ ըստ ԱՄՀ տվյալների 2017թ. ՀՀ-ում գույքահարկից ստացված եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 0.5 տոկոսը, որը ավելի քան երկու անգամ ցածր է ՌԴ-ի, Բելառուսի, Վրաստանի և այլ երկրների ցուցանիշներից (տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Գույքահարկ/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում և մի շարք այլ երկրներում, 2017թ., %²



Գույքահարկի նման ցածր մակարդակի հիմնական պատճառը կադաստրային արժեքների գնահատման հետ կապված խնդիրներն են: Հետևաբար, անշարժ գույքի հարկման բազան պետք է հնարավորինս մոտեցնել դրանց շուկայական արժեքներին, ինչը հնարավորություն կտա մի կողմից մեծացնել համայնքների բյուջեների եկամուտները, մյուս կողմից ապահովել հարկման համակարգի արդարության սկզբունքը:

2. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Գույքահարկի բարեփոխումների մշակման գործընթացը և այս ոլորտին վերաբերող քննարկումները սկսվել են դեռևս 2016 թվականից: Առաջարկվում էր հողի հարկի և գույքահարկի փոխարեն սահմանել միասնական հարկ և միասնական դրույքաչափեր: Ըստ այդմ, անշարժ գույքի կադաստրային արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

² Աղբյուրը՝ ԱՄՀ պետական ֆինանսների վիճակագրություն:

Ա (անշարժ գույքի կադաստրային արժեք) =

Ա_հ (հողամասի կադաստրային արժեք) x **Գ_{շին}** (շինությունների բնութագրիչների համալիր գործակից)

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ անհրաժեշտություն կառաջանար սահմանել հողամասերի մեկ միասնական բազային արժեք և Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը բաժանել տարածագնահատման գոտիների՝ ըստ հողամասերի շուկայական արժեքների նվազման տրամաբանության: Նախատեսվում էր առանձնացնել 20 տարածագնահատման գոտի՝ ներկա 16 գոտիների փոխարեն: Արդյունքում հարկման բազա էր դառնալու հողը և դրա բարելավումները:

Այսպիսով, առաջարկվում էր բարեփոխումներն իրականացնել երկու փուլով՝ զրոյական փուլ և հիմնական փուլ:

2.1. Զրոյական փուլ

Զրոյական փուլով նախ պետք է լուծվեր ցածր կադաստրային արժեքների հարցը՝ պարզապես բազմապատկելով բազային արժեքները 2.0 գործակցով: Այսինքն՝ նախատեսվում էր կրկնապատկել կադաստրային արժեքները: Բազային նոր արժեքներով հարկումը նախատեսվում էր սկսել բարձրարժեք (100 մլն դրամ և ավելի արժեք ունեցող) գույքի համար (մոտ 1,000 բնակելի տուն և 581 բնակարան) 2019 թվականի հունվարի 1-ից՝ ապահովելով աստիճանական համատարած անցում հետևյալ ժամանակացույցով.

Անշարժ գույքի միասնական արժեք (մլն դրամ)	Հարկման տարի
100 և ավելի	2019
70-100	2020
40-70	2021
0-40	2022

«Աշխատող» արտադրական և հասարակական անշարժ գույքի համար նախատեսվում էր շահութահարկից կամ դրան փոխարինող այլ հարկատեսակից անշարժ գույքի հարկի «հավելուրդային» մասի նվազեցում՝ հինգ տարի անցումային ժամանակաշրջանով:

Նախատեսվում էր նաև նպաստել, որպեսզի չօգտագործվող գույքը սկսեր կիրառվել ըստ նպատակի՝ դառնալով տնտեսական գործունեությանը մասնակցող գործոն: Այդ նպատակով կառուցապատման համար տրամադրված և փաստացի չկառուցապատված, հողերի հարկի այլ՝ ավելի բարձր, դրույքաչափեր պետք է սահմանվեր (կամ հարկի նկատմամբ կիրառվեր 2.0 գործակից):

2.2. Հիմնական փուլ

Հաջորդ՝ հիմնական փուլում նախատեսվում էր իրականացնել նոր տարածագնահատման գոտիների սահմանում, որոշել հողամասերի և շինությունների բազային արժեքները և գոտիավորման գործակիցները: Պետք է ներդրվեր անշարժ գույքի արժեքի գնահատման նոր բանաձև՝ «Հող և դրա բարելավումներ» սկզբունքի կիրարկմամբ:

Նախատեսվում էր մշակել և ընդունել «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի նախագիծը, ինչպես նաև նախատեսվում էր ներդնել հարկման անբարենպաստ հետևանքները մեղմելու նպատակով անցումային ժամանակաշրջանը:

Հասարակական և արտադրական օբյեկտների համար անշարժ գույքի հարկի գծով հարկային բեռի ավելացման «չեզոքացումը» նախատեսվում էր իրականացնել՝ հնարավորություն ընձեռելով հարկ վճարողներին նվազեցնելու անշարժ գույքի հարկի հավելուրդային մասը շահութահարկից կամ դրան փոխարինող այլընտրանքային հարկատեսակից: Եթե անշարժ գույքի սեփականատերը ֆիզիկական անձ է, ապա նախատեսվում էր այդ անշարժ գույքի մասով հայտարարագրված եկամտային հարկից նվազեցում:

3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

3.1. Ֆրանսիա

Ֆրանսիայում գոյություն ունի անշարժ գույքի հարկի երկու տեսակ՝ հողի հարկ (taxe foncière) և բնակության հարկ (taxe d'habitation). Բնակության հարկի չափը որոշվում է ՏԻՄ կողմից հաստատված հարկի դրույքաչափի և վարձակալության կադաստրային արժեքի համադրումից՝ հանած սահմանված նվազեցումները³:

Հողի հարկը հաշվարկվում է առանձին՝ կառուցապատված օբյեկտների և ոչ կառուցապատված օբյեկտների համար: Կառուցապատված օբյեկտների համար հարկման բազան **վարձակալության կադաստրային արժեքն է**, որն իր հերթին կազմավորվում է կառուցապատված օբյեկտների ենթատեսակների⁴ համար սահմանված սկզբունքներով և հանած դրա արժեքի 50%-ը (տե՛ս Աղյուսակ 2):

³ Տե՛ս <https://www.compteco2.com/article/comment-est-calculée-la-taxe-habitation-2019/>

⁴ Յուրաքանչյուր ենթատեսակ առանձին հողվածով է սահմանվում:

Ֆրանսիայի հարկային օրենսգրքի 1396-րդ հոդվածով սահմանվում է ոչ կառուցապատված օբյեկտների վարձակալության կադաստրային արժեք, որը գոյանում է ոչ կառուցապատված օբյեկտների համար նախատեսված սկզբունքների հիման վրա՝ հանած դրա արժեքի 20%-ը: 1399-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկման կարգը սահմանվում է այն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որտեղ գտնվում է անշարժ գույքը⁵:

Վարձակալության կադաստրային արժեքը իրենից ներկայացնում է անշարժ գույքի վարձակալության տեսական արժեք (վարձ), որը սեփականատերը կարող էր ստանալ, եթե ցանկանար այն վարձով տալ⁶: Վարձակալության կադաստրային արժեքը հաշվարկվում է հանրային ֆինանսների ոլորտում լիազոր մարմնի կողմից⁷: Գնահատման ընթացքում լիազոր մարմնին աջակցում են ուղղակի հարկման ոլորտում լիազորված տեղական և գերատեսչական հանձնաժողովները, որտեղ ընդգրկված են ընտրովի պաշտոնատար անձինք և հարկատուները⁸: Գույքում կատարված փոփոխությունները (այդ թվում՝ կառուցվածքային փոփոխություններ և այլն) հաշվի առնելու համար վարձակալության կադաստրային արժեքի մեջ ներառվում են նաև այն հայտարարագրերը, որոնք տրամադրվում են սեփականատերերի կողմից⁹:

3.2. Ռուսաստան

Ռուսաստանում անշարժ գույքի կադաստրային արժեքի գնահատումը 2020 թվականից իրականացվելու է պետական բյուջետային հիմնարկների կողմից¹⁰: ՌԴ-ում կադաստրային արժեքի որոշման համար օգտագործվում են մասսայական գնահատման մեթոդներ, որոնց շարքում են ծախսային, համեմատական կամ եկամտային մեթոդները: Կադաստրային արժեքի որոշման համար օգտագործվող մոտեցումների և մեթոդների, մասսայական գնահատման մոդելների ընտրությունը պետք է հիմնավորվի:

⁵ Տե՛ս

https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?sessionId=350797FA199A092BF9B3F68564D4747F.tplgfr37s_1?idSectionTA=LEGISCTA000006191892&cidTexte=LEGITEXT000006069577&dateTexte=20190917

⁶ Տե՛ս Direction général des finances publiques, brochure pratique: impôts locaux 2019, էջ 21:

Մատչելի է հետևյալ հղումով՝

https://www.impots.gouv.fr/portail/www2/fichiers/documentation/brochure/idl/idl_2019.pdf

7:Տե՛ս նույն տեղում:

8 Տե՛ս նույն տեղում:

9 Տե՛ս նույն տեղում:

¹⁰ Տե՛ս «Պետական կադաստրային գնահատման մասին» դաշնային օրենքի 4-րդ, 6-րդ և 24-րդ հոդվածներ: Մատչելի է հետևյալ հղումով՝

http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_200504/

ՌԴ տնտեսական զարգացման նախարարության 2017 թվականի մայիսի 12-ի N 226 հրամանի 1.5-րդ կետի համաձայն՝ կադաստրային արժեքի գնահատման հիմքում դրվում են հետևյալ կանխավարկածները.

- Սեփականատերը օբյեկտն ազատորեն կարող է օտարել մրցակցային շուկայի պայմաններում:
- Նոր սեփականատերը ստանում է գույքը ամբողջապես օգտագործելու հնարավորություն այն վիճակում, ինչպիսին այն ձեռք է բերվել (կադաստրային արժեքի հաշվարկման դրությամբ)՝ անկախ նրանից, թե արդյո՞ք տվյալ օբյեկտը սահմանափակ շրջանառու է, առկա է տվյալ տեսակի օբյեկտների համար շուկա, թե՞ այն փաստացի կարող է օտարվել:

Այն դեպքում, երբ անհնարին է կիրառել գնահատման մասսայական մեթոդները, գնահատումը իրականացվում է կոնկրետ օբյեկտի համար¹¹:

3.3. Գերմանիա¹²

Գերմանիայում գույքահարկի դրույքաչափը կախված է նրանից, թե որ դասին է պատկանում հարկման ենթակա գույքը: Գերմանիայում սահմանված է գույքի երկու դաս՝ «A» և «B»: «A» դասը ներառում է գյուղատնտեսական և անտառային հողերը, «B» դասը՝ կառուցապատված կամ կառուցապատման ենթակա հողերը:

Անշարժ գույքի հարկը հաշվարկվում է հետևյալ երեք գործոնների բազմապատկումով՝

- անշարժ գույքի գնահատված արժեք,
- անշարժ գույքի դրույքաչափ,
- մունիցիպալ բազմապատկիչ (municipal multiplier):

Անշարժ գույքի գնահատված արժեքը սահմանվում է հարկային վարչարարություն իրականացնող մարմինների կողմից՝ Գնահատման օրենսգրքի (Bewertungsgesetz) համաձայն: Օրենսգիրքը հիմնվում է անշարժ գույքի պատմական գների վրա, որոնք հիմնականում էականորեն ցածր են շուկայական գնից:

Հարկի դրույքաչափերը տատանվում են՝ կախված երկրամասից և գույքի նպատակային նշանակությունից:

¹¹ Տե՛ս հրամանի 1.3-րդ կետը:

¹² Տե՛ս <https://www.gtai.de/GTAI/Navigation/EN/Invest/Investment-guide/The-tax-system/taxation-of-property.html>

Յուրաքանչյուր երկրամաս ինքն է սահմանում մունիցիպալ բազմապատկիչը՝ գույքի երկու դասերի համար: Ընդ որում՝ «B» դասի բազմապատկիչը ավելի բարձր է լինում:

3.4. Իսպանիա

Իսպանիայում գույքահարկի հաշվարկման հիմքում դրվում է գույքի կադաստրային արժեքը: Գույքի կադաստրային արժեքը որոշում է Հողի ռեգիստրը (Land registry): Կադաստրային արժեքի որոշման ընթացքում հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

- Տան գտնվելու վայրը և հարակից գործոնները, ներառյալ շրջանի տնտեսական վիճակը, ուրբանիզացիայի մակարդակը, այն հողի նպատակային նշանակությունը, որի վրա գտնվում է տունը և այլն:
- Կառույցի ֆիզիկական հատկանիշները՝ հնությունը, կառուցման արժեքը, վճարված հարկերը, որակը և այլն: Եթե օբյեկտը օգտագործվում է ձեռնարկատիրական նպատակների համար, ապա դրանից գոյացած եկամուտները և պահպանման համար կատարված ծախսերը նույնպես ներառվում են կադաստրային արժեքի մեջ:
- Շուկայական արժեքին վերաբերող այլ գործոններ:

Կադաստրային արժեքը չի կարող գերազանցել շուկայական արժեքին: Նշվածի արդյունքում կադաստրային արժեքը ենթակա է պարբերական վերանայման: Կադաստրային արժեքը թարմացվում է Իսպանիայի Բյուջետային համակարգի մասին օրենքով (General State Budget Law) հաստատած գործակիցների միջոցով¹³:

Գույքահարկի դրույքաչափը սահմանվում է ՏԻՄ կողմից՝ կադաստրային արժեքի 0.00405%-0.01166% տոկոսի չափով՝ կախված ՏԻՄ-ից¹⁴: Դրույքաչափերը տատանվում են՝ կախված գույքի գտնվելու վայրից¹⁵:

3.5. Ռումինիա

Ռումինիայում սեփականության հարկը լինում է երկու տեսակի՝ կառույցի հարկ (Building tax) և հողի հարկ (Land tax):

¹³ Տե՛ս <https://www.bbva.es/eng/general/finanzas-vistazo/hipotecas/calcular-valor-catastral/index.jsp>

¹⁴ Տե՛ս <https://internationalliving.com/countries/spain/taxes-in-spain/>

¹⁵ Տե՛ս <https://home.kpmg/xx/en/home/insights/2018/07/european-tax-spain-country-profile.html>

Ընկերություններին պատկանող կառույցների համար հարկը սահմանում է Տեղական խորհուրդը¹⁶ (Local Council): Հարկի չափը կախված է կառույցի տեսակից: Բնակելի շենքերի դեպքում՝ հողի հարկային արժեքի 0.08%-0.2%-ն է, ոչ բնակելի շենքերի դեպքում՝ 0.2%-1.3%-ը¹⁷:

Ֆիզիկական անձանց դեպքում գույքահարկը գանձվում է ֆիքսված վճարի ձևով (վճարի չափը որոշվում է գույքի գտնվելու վայրի և այլ գործոնների հիման վրա), որը հաշվարկվում է հողի կամ կառույցի մակերեսի հիման վրա¹⁸:

Հողի հարկի հաշվարկման համար Տեղական խորհուրդը սահմանում է դրույքաչափ՝ մեկ քառակուսի մետրի համար: Դրույքաչափը կախված է հողի գտնվելու վայրի մակարդակից (rank of the area where the land is located) և հողի օգտագործման կատեգորիայից (category of land use):

3.6. Վրաստան

Սեփականության հարկով հարկման բազան գույքի շուկայական արժեքն է: Հարկի չափը որոշում է տեղական ինքնակառավարման մարմինը, սակայն Հարկային օրենսգրքով նախատեսված սահմաններում¹⁹:

Ֆիզիկական անձանց դեպքում հարկի չափը կախված է ընտանիքի տարեկան եկամուտներից²⁰: Այսպես, այն ընտանիքների համար, որոնց տարեկան եկամուտը կազմում է ընդհուպ մինչև 100.000 լարի, սեփականության հարկը կարող է կազմել հարկվող գույքի 0.05%-0.2%-ը²¹:

Իրավաբանական անձանց համար հարկի չափը (rate) որոշվում է հարկվող գույքի արժեքի առավելագույնը 1%-ի չափով: Հարկվող գույքի արժեք է համարվում միջին տարեկան հաշվեկշռային արժեքը (average annual net book value²²)²³: Հարկային աուդիտի ընթացքում հարկային վարչարարություն իրականացնող մարմինը **կարող է** որոշել/սահմանել գույքի արժեքը՝ դրա շուկայական գնով²⁴:

¹⁶ Տեղական ինքնակառավարման մարմին

¹⁷ Տե՛ս 2019 Tax guideline: Romania, Accace, էջ 19-20:

¹⁸ Տե՛ս <https://www2.deloitte.com/content/dam/Deloitte/global/Documents/Tax/dttl-tax-romaniahighlights-2019.pdf>

¹⁹ Տե՛ս Վրաստանի Հարկային օրենսգրքի հոդված 6, մաս 4: Աղբյուրը՝ <https://www.matsne.gov.ge/ka/document/download/1043717/118/en/pdf>

²⁰ Տե՛ս նույն տեղում հոդված 202, մաս 5:

²¹ Տե՛ս նույն տեղում հոդված 202, մաս 5, կետ «ա»: Նշված են առավելագույն և նվազագույն շեմերը:

²² Հաշվարկվում է ամբողջ գույքի միջին արժեքով՝ օրացուցային տարվա սկզբում և վերջում:

²³ Տե՛ս Հարկային օրենսգիրք, հոդված 202, մաս 1:

²⁴ Տե՛ս նույն տեղում, հոդված 202, մաս 4:

Ստորև բերվող Աղյուսակ 2-ում ներկայացված են անշարժ գույքի հարկման օրենսդրական կարգավորումները մի շարք երկրներում: Կարելի է նկատել, որ հիմնականում որպես հարկման բազա կիրառվում է կադաստրային արժեքը կամ գույքի մակերեսը: Որոշ երկրներում կիրառվում է նաև գույքի եկամտաբերությունը կամ վարձակալության արժեքը (Ֆրանսիայի դեպքում): Ինչ վերաբերում է հարկման դրույքաչափերին, ապա դրանք տարբեր են բոլոր երկրներում, սակայն միմյանց բավական մոտ:

Աղյուսակ 2. Անշարժ գույքի տարբեր տեսակների հարկման դրույքաչափերը տարբեր երկրներում

ԵՐԿԻՐԸ	ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ	ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
Հայաստան	Հող՝ գյուղատնտես. նշ.	Կադաստրային զուտ եկամուտը	15%
	Հող՝ այլ	Կադաստրային արժեք	0.5% - 1.0%
	Բնակարան		0.1% - 1%
	Բնակելի տուն		0.1% - 1%
	Արտադրական գույք		0.30%
	Հասարակական գույք		0.30%
Ֆրանսիա	Հող	Գնահատված վարձակալության արժեքի 80%-ը	0-10% (միջինը՝ 2.3%)
	Վարձակալված բնակելի	Գնահատված վարձակալության արժեքի 50%-ը	4.5% - 29.6% (միջինը՝ 17.04%)
	Սեփական բնակելի	Գնահատված վարձակալության արժեքի 80%-ը	4.5% - 29.6%
	Արտադրական		4.5% - 29.6%
	Այլ	Շուկայական արժեք	0.5% - 1.5%
Բելգիա	Բոլոր տեսակի գույք	Գնահատված եկամուտը գույքից	40% - 50%
Կիպրոս	Տեղական գույքահարկ, բոլոր տեսակի գույք	Կադաստրային արժեք	0.6% - 1.9%
	Պետական գույքահարկ, բոլոր տեսակի գույք		Մինչև 1%
Չեխիա	Հող՝ գյուղատնտես. նշ.	Կադաստրային արժեք	0.75%
	Հող՝ անտառային տարածք		0.25%
	Կառուցապատված տարածք	1 քմ	0.008 EUR/1քմ
	Բնակելի տներ, բնակարաններ		0.08 - 0.4 EUR/1քմ

ԵՐԿԻՐԸ	ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ	ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱ	ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ
	Հասարակական շենքեր		0.24 - 1.2 EUR/1քմ
	Արտադրական շենքեր		0.4 - 2 EUR/1քմ
Դանիա	Անշարժ գույք	Կադաստրային արժեք	1% - 3%
	Հող		3.40%
Գերմանիա	Հող՝ գյուղատնտես. նշ.	Կադաստրային արժեք	0.60%
	Այլ անշարժ գույք		0.5% - 3.5%
Հունգարիա	Հող	1 քմ	0.67 EUR/1քմ
	Շինություններ		3.68 EUR/1քմ
Ռումինիա	Բոլոր տեսակի գույք	Կադաստրային արժեք	1% ֆիզիկական անձանց համար, 0.25% - 1.5% իրավաբանական անձանց համար
Սլովակիա	Հող	Կադաստրային արժեք	0.25%
	Շինություններ և բնակարաններ	1 քմ	0.033 EUR/1քմ

4. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՂ ՓԱԹԵԹԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ հարկային օրենսգրքի 11-րդ բաժնի համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու անշարժ գույքի հարկը, ըստ որի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ են համարվում՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Օրենսգրքում նաև նշվում է, որ գործող կադաստրային արժեքներն ու հաշվարկային զուտ եկամուտները համարվում են անշարժ գույքի հարկով հարկման բազա մինչև անշարժ գույքի շուկայական գնահատման կարգը սահմանող օրենքի ուժի մեջ մտնելը: Այդպիսի օրենքի ուժի մեջ մտնելուց հետո անշարժ գույքի հարկման բազա է համարվելու շուկայական արժեքին մոտարկված արժեքը: Սյս հանգամանքով է պայմանավորված ներկայումս «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը:

Օրենքի ընդունման ակնկալվող արդյունքներն են՝

- 1) հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխում՝ պահպանելով հարկման հորիզոնական և ուղղահայաց արդարության սկզբունքները,
- 2) շուկայական գնագոյացմանը համահունչ գնահատման համակարգի առկայություն,

- 3) գույքային հարկերի մասով հարկային վարչարարության պարզեցում,
- 4) անշարժ գույքի շուկայի զարգացման և անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովման նպաստում,
- 5) անշարժ գույքի միասնական և շուկայական արժեքին մոտարկված զանգվածային գնահատում:

Սակայն, եթե ուսումնասիրենք ներկայացված «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի նախագիծը, ապա չենք գտնի վերոհիշյալ նպատակների արտացոլումը: Ներկայացված օրենքի նախագծում սահմանվում են անշարժ գույքի տարբեր տեսակների (հող, բնակելի տներ, բնակարաններ և այլն) շուկայական արժեքի հաշվարկման բանաձևերը, որոնք, սակայն, գրեթե նույնությամբ կրկնում են 2016 թվականի հոկտեմբերին ընդունված հարկային օրենսգրքի 11-րդ բաժնի 1-ին հավելվածով սահմանված բանաձևերը: Հետևաբար, փոխվում է միայն անվանումը՝ կադաստրային արժեքից դառնալով շուկայական արժեք, սակայն, ըստ էության՝ հարկման բազայի հաշվարկի մեթոդը մնալու է նույնը:

Միաժամանակ, օրենքում բացակայում են անշարժ գույքի հարկման նպատակով դրանց մեկ քառակուսի մետրի բազային արժեքները, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները: Այս ամենը պետք է սահմանվի ՀՀ կառավարության որոշմամբ: Ըստ կառավարության հիմնավորումների՝ գույքի բազային արժեքները պետք է սահմանվեն անշարժ գույքի շուկայի զարգացումներին և շուկայական գների փոփոխություններին համահունչ: Սակայն այս դեպքում անհրաժեշտ է սահմանել հստակ մեխանիզմներ, թե ինչպես է չափվելու անշարժ գույքի շուկայական արժեքի փոփոխությունը և ինչ չափով, ինչ հաճախականությամբ են ճշգրտվելու կառավարության կողմից սահմանված բազային արժեքները: Առանց հստակ սկզբունքներ սահմանելու բարեփոխումների արդյունքում գույքահարկի խնդրի հետ կապված անորոշությունը ավելի կխորանա:

Ըստ նախնական գնահատականների՝ անշարժ գույքի գնահատման նոր համակարգի ներդրմամբ, փաստացի վճարման ենթակա գույքահարկի գումարը կաճի մի քանի անգամ:

Հարկ է նշել, որ գույքահարկի ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական բացասական ազդեցությունները մեղմելու համար (օրինակ՝ սկզբնական շրջանում 100 մլն դրամից ավելի արժեք ունեցող գույքի վրա տարածելը կամ շահութահարկից նվազեցնելը) դեռևս ոչ մի մեխանիզմ չի ներկայացվել: Հետևաբար, այն

պնդումները, որ այս բարեփոխումը չի ազդելու արտադրողների ծախսերի կամ երևանի կենտրոնում բնակվող, սակայն ցածր եկամուտ ունեցող քաղաքացիների վրա, դեռևս ոչ մի օրենսդրական արտացոլում չեն գտել:

Հաճախ գույքահարկի բարձրացումը կապվում է այլ հարկատեսակների նվազեցման հետ՝ նշելով որ, օրինակ, եկամտային հարկի նվազեցումից առաջացող բյուջետային եկամուտների կորուստը կարելի է փոխհատուցել գույքահարկի բարձրացումից ստացվող եկամուտներով: Սակայն այստեղ պետք է զգույշ լինել, քանի որ գույքահարկը տեղական բյուջե վճարվող հարկ է, իսկ եկամտային հարկը՝ պետական բյուջե: Հետևաբար, պետական ֆինանսների տեսանկյունից այս հարկատեսակները միմյանց չեն կարող փոխհատուցել: Եկամտային հարկի բարձրացման արդյունքում համայնքներին տրամադրվող դոտացիաները նույնպես չեն նվազի:

Ըստ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի²⁵ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4 տոկոսը: Հետևաբար, գույքահարկի բարձրացումը կարող է ազդել դոտացիաների՝ ըստ համայնքների հատկացման վրա (այն համայնքները, որտեղ գույքահարկից ստացվող եկամուտները կաճեն ավելի շատ, կստանան ավելի քիչ դոտացիա), սակայն դրանց ընդհանուր գումարի վրա ազդեցություն ունենալ չի կարող: Եթե կառավարությունը նախատեսում է գույքահարկի բարձրացումից ստացվող լրացուցիչ եկամուտների հաշվին նվազեցնել պետական բյուջե վճարվող այլ հարկատեսակ (օրինակ՝ եկամտային հարկը), ապա անհրաժեշտ կլինի փոփոխություն կատարել նաև այս օրենքում:

5. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ՝ ԱՌԱՆՑ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ


Բացի ցածր կադաստրային արժեքներից և ցածր դրույքաչափերից, ՀՀ գույքահարկի համակարգը ունի նաև մեկ ուրիշ կարևոր խնդիր՝ վարչարարությունը: Գույքահարկը տեղական հարկ է և վճարվում է համայնքի բյուջեին: Հետևաբար, գույքահարկի գծով վարչարարություն իրականացնող մարմինը համայնքի ղեկավարի աշխատակազմն է: Գույքահարկը այլ հարկատեսակների համեմատ ունի որոշակի առանձնահատկություններ, քանի որ գույքահարկը կապված չէ տնտեսական գործունեության հետ: Հետևաբար,

²⁵ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-137, ընդունված՝ 24.06.1997, հոդված 20, մաս 2:

գույքահարկի չվճարման դեպքում բավական բարդ է վարչարարության միջոցով այն հավաքագրելը:

Այդ մասին են խոսում նաև փաստացի տվյալները: Գծապատկեր 4-ում ներկայացված են գույքահարկի տարեկան փաստացի մուտքերը և համեմատությունը պլանավորվածի հետ: Կարող ենք տեսնել, որ նույնիսկ ներկա ցածր կադաստրային արժեքների և դրույքաչափերի պայմաններում գույքահարկի գծով եկամուտները ամեն տարի թերակատարվում են: Այստեղ չենք կարող ասել, որ պատճառը վատ պլանավորումն է, քանի որ գույքահարկի գծով մուտքերը պլանավորվում են ըստ առկա գույքի բազայի: Առավել ակնհայտ է 2018թ. ցածր կատարողականը, որը կապված է 2018-ին տեղի ունեցած քաղաքական իրադարձություններից հետո կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքների հետ:

Գծապատկեր 4. Գույքահարկի պլանավորված և հավաքագրված ծավալները, 2010-2018թթ.



Հողի հարկի մասով պատկերն ավելի խնդրահարույց է: Վերջին 5 տարիների ընթացքում հողի հարկի գծով հարկային եկամուտները թերակատարվել են միջին հաշվով շուրջ 10 տոկոսով, իսկ 2018թ. կատարողականը կազմել է ընդամենը 83 տոկոս:

Հարկ է նշել, որ նախկինում երբևէ չի դիտարկվել գույքահարկի՝ 2 անգամից ավելի բարձրացման նախադեպ, քանի որ այն լուրջ խնդիրներ կստեղծեր վարչարարության տեսանկյունից: Նույնիսկ ավելի պակաս բարձրացումը

նախատեսվում էր նախ ներդնել խոշոր համայնքներում, այնուհետև աստիճանաբար տարածել ողջ երկրում:

Հետևաբար, այս խնդիրները հաշվի առնելով, նախ պետք է իրականացնել գույքահարկի վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումներ, այնուհետև ընդունել գույքահարկի մոտ 2 անգամ կամ ավելի բարձրացում նախատեսող օրենսդրական փաթեթը:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ գույքահարկի բարեփոխումների իրականացումը բավական արդիական է և անհրաժեշտ, քանի որ այս ոլորտում կան բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք օրենսդրական լուծման կարիք ունեն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում գույքահարկի ծավալները ՀՆԱ-ի նկատմամբ բավական ցածր են՝ համադրելի երկրների համեմատությամբ: Սակայն այդ երկրներում բնակելի գույքի համար առավելապես օգտագործում են կադաստրային գնահատման մեթոդաբանությունը, որը սակայն մոտեցված է շուկայական արժեքին: Հետևաբար, կադաստրային արժեքի գնահատման մեթոդաբանության ճիշտ փոփոխությունների արդյունքում հնարավոր կլինի ապահովել գույքի առավել արդյունավետ հարկում: Ձեռնարկություններին պատկանող գույքի հարկումը ուսումնասիրված երկրներից շատերում հիմնականում իրականացվում է գույքի հաշվեկշռային արժեքի հիման վրա: Հետևաբար ՀՀ-ում նույնպես կարելի է ընտրել այս ճանապարհը:

Սակայն ներկայացված փաթեթում արտացոլված չեն միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, և այն բավական հեռու է ՀՀ-ում այս ոլորտի հիմնախնդիրները լուծելու ուղուց: Այն ոչ միայն չի պարունակում գույքի շուկայական գնահատման հստակ մեխանիզմներ, այլև մեծացնում է գույքահարկի դրույքաչափերի սահմանման անկայունությունը և անորոշությունը:

Օրենսդրական փաթեթում չեն նախատեսվում գույքահարկի բարձրացման բացասական ազդեցությունները մեղմող միջոցառումներ, ինչը նշանակում է, որ տվյալ բարեփոխումը կունենա բացասական ազդեցություն՝ նվազեցնելով բնակչության տնօրինվող եկամուտները և մեծացնելով ձեռնարկությունների ծախսերը:

Առանձնակի կարևորություն ունի նաև վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումների նախատեսումը և իրականացումը: Եթե դա չարվի, ապա գույքահարկի բարձրացումը չի ունենա ոչ մի դրական ազդեցություն՝ անգամ համայնքների եկամուտների բարձրացման տեսանկյունից, քանի որ պլանավորված գույքահարկից մուտքերը պարզապես չեն վճարվի:

Կադաստրային արժեքի հաշվարկման բանաձևում կիրառվող՝ անշարժ գույքի բազային արժեքները և գործակիցների մեծ մասը սահմանվելու է կառավարության որոշմամբ: Մինչև այդ որոշումների ընդունումը հնարավոր չի լինի հստակ գնահատել բնակչության և ձեռնարկությունների համար գույքահարկի բեռի ավելացման չափը: Հետևաբար, գույքահարկի բարեփոխումների սոցիալ-տնտեսական հետևանքները հնարավոր կլինի քանակապես գնահատել կառավարության համապատասխան որոշումների ընդունումից հետո:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: